ՔԱՂՎԱԾՔ
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԼԽԱՎՈՐ ԴԱՏԱԽԱԶԻՆ ԱՌԸՆԹԵՐ ՈՐԱԿԱՎՈՐՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՈՐՈՇՈՒՄԻՑ

13 հոկտեմբերի 2022թ. **ք. Երևան**

ՀՀ գլխավոր դատախազին առընթեր որակավորման հանձնաժողովը 2022թ. հոկտեմբերի 13-ի նիստում քննարկեց Ա. Ս.-ի՝ դատախազների թեկնածությունների ցուցակում և «Դատախազության մասին» ՀՀ օրենքի 39-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետով սահմանված պաշտոններում նշանակվելու համար առաջխաղացման ցուցակում ընդգրկելու վերաբերյալ եզրակացություն տալու հարցը:

Հաշվի առնելով Ա. Ս.-ի կողմից համապատասխան մասնագիտացման ոլորտում հակիրճ իրավական հարցի վերաբերյալ տրված պատասխաններն ու դիտարկումները և ղեկավարվելով «Դատախազության մասին» ՀՀ օրենքի 38-րդ հոդվածի 7-րդ մասով, ՀՀ գլխավոր դատախազի՝ 2018թ. ապրիլի 26-ի թիվ 43 հրամանի N 1 հավելվածի 26-րդ և 35-րդ կետերով, ՀՀ գլխավոր դատախազի՝ 2018թ. ապրիլի 27-ի թիվ 45 հրամանի հավելվածի 7-րդ կետի 9-րդ և 12-րդ ենթակետերով, **Հանձնաժողովը**

Ո Ր Ո Շ Ե Ց՝

Դրական եզրակացություն ներկայացնել ՀՀ գլխավոր դատախազին՝ Ա. Ս.-ին դատախազների թեկնածությունների ցուցակում և «Դատախազության մասին» ՀՀ օրենքի 39-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետով սահմանված պաշտոններում նշանակվելու համար առաջխաղացման ցուցակում ընդգրկելու վերաբերյալ: